

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլխարինյ համար	12 փր.
սարկիսի վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	15 փր.
սարկիսի վեցամսեայ	8 "
Աւերիկայի համար	3 սլ.
սարկիսի վեցամսեայ	1.50 "

Երանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. հրեֆիկն աւելի անգամներու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ է

ՇԱՐՄՈՒՄ

ԼՐԱՅԻՐ ԱԶԳՅՈՒՆ ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲՈՎՈՒԻ ԶՈՐԵՓԵԱԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯТЪ

Նամակ եւ դրամ որ կ'ընդունուին ըստ հասցիի

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուլխարինյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չիւսում

ՇԱՐՄՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԵՒԻՎ ՎՃԱՐԷ

ՍՈՒԹԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Պոլսոյ եղբունդատ ատենին առջեւ է որ տեղի կունենայ թրքական էն պոզալի մէկ նոր խաղաղութիւնն ալ:

Այն վայրկեանէն իսկ երբ կարմիր Սուլթանը իր դէմ եղած անյաջող մահափորձին առթիւ բարի ազատութի հեռագիրներ ստացաւ Եւրոպայի սահմանադրական Վեհապետներէն, և մանաւանդ հանրապետութեան նախագահ Լուպէէն, այն վայրկեանէն Երլարզի հէշը ժամանակը հասած նկատեց հինուց իր փայլալայտ մէկ գաղափարը իրականացնելու: Այդ գաղափարն էր հայկական յեղափոխութիւնը Եւրոպայի առջեւ իբր անիշխանական շարժում մը ճանչցնել տալ: Հրապարակային գատավարութեան բոլոր կատակերգութիւնը, որ կը խաղցուի այսօր Պոլսոյ գատարանին առջեւ, այդ ձգտումն ունի ամենէն աւելի, ինչ որ մեր ընթերցողները պիտի տեսնեն գատավարութեան մանրամասնութիւնները կարգալով այսօրուան «Շարժում»-ին մէջ:

Հանգամանքները առերիւսթապէս աւելի քան երբէք իրեն այդ գիտաւորութեան նպաստաւոր էին՝ երկրի մը վեհապետին դէմ անյայտ անձերու կողմէ մահափորձ կը կատարուէր, փորձին հեղինակները չէին համարձակած յայտարարիլ իրենց գործը և անոր Կրգապատճառները, կը յայտնուէր միայն թէ հայեր էին:

Եւրոպական վեհապետները, որոնցմէ շատեր միշտ իրենց հաշուին մէջ ունեցած են այդ կարգի փորձի մը օր մը ենթարկուելու վտանգը, փութացած էին իրենց համակրութեան զգացումները յայտնել Սուլթանին: Սուլթանը ապահով էր որամբողջ Եւրոպայի կառավարող շրջանակը հակակիր էր այդ

արարքին ու չի պիտի քաջալերէր անոնց հեղինակները ինչ արդարացումներու տակ ու զրոնուէին:

Եւրոպան արդէն սկսած էր հետզհետէ անպասե նկատել հայ յեղափոխութիւնը և կը ջանար միշտ 96 էն անդին եղած հայկական թոյլ ճիգերը անձայն անչլուկ մոխրի տակ ծածկել: Մէկ խօսքով ան չէր ախորժեր հայկական խնդրով զբաղելու:

Խորամանկ Համիտ անմիջապէս ըմբռնեց այդ նրբութիւնները և հրամայեց ներկայ կատակերգութեան վարագոյրը բանալ, թրքական «անաշտ» գատարաններուն առջեւ հայ անիշխանական ներք (°°) գատելու համար:

Ժամանակ մը Սուլթանը կը ջանար մտի ինչ մէջ թաղել այն ամէն շարժում, որ քան ալ ջընջին ըլլար, որ հայկական բնութիւնը կը կրէր Երբ դէպք մը տեղի կունենար, անմիջապէս թուրք գրաքննութիւնը թերթերու մէջ կը հրատարակէր կարճ հեռագիր մը ծանուցանող թէ «չնորհիւ վեհ. Սուլթանի անդորրութիւնն ու ապահովութիւնը կատարեալ է»: Այս անգամ Սուլթանը ինք կը ծանուցանէ մահափորձին հայ յեղափոխականներու գործ ըլլալը: Ու մինչդեռ հայ յեղափոխականները լուռ կը մնային իրենց վերագրուած գործը հերքելու, անհրաժեշտ բացատրութիւնները տալու և իրենց իրաւացի պահանջքը այս տարի ալ նորէն Եւրոպայի առջեւ դնելու, անդին Պոլսոյ թերթերուն մէջ Գրօշակ, Բրօ Արմէնիա Գրօշակ և Գրօ թիւն բառերը տպագրուիլ կը սկսէին: Դերերը փոխուած էին. խօսողը կը լռէր և լռողը կը խօսէր բաց ճակատ:

Արդարեւ մահափորձը միայն իր յաջողութեան պարագային պիտի կրնար ազդեցութիւն մը ունենալ գոյցէ:

Բարեբախտաբար հայկական յեղափոխութիւնը նոր չէ որ կը հիմնուի: Գոյութեան պատմական ու միջազգային իրաւունք

ու վտելականութիւն ստացած հաստատութեան մըն է ան, որ ծնունդն է թրքական խայտառակ բէթիմին, ծանրահինգ տարուան յեղափոխական շարժումները, որոնք իրենց ետեւէն քաջեցին Եւրոպական պետութիւններու քիչ կամ շատ ազդեցիկ միջամտութիւնը, ինքնին արդէն հերքումներ են սուլթանական բոլոր ճիգերուն իբր անիշխանական ներկայացնելու համար անոնց հեղինակները:

Հայկական յեղափոխութիւնը իր ծրագրով ու նպատակով ծանօթ է բոլոր Եւրոպայի, մէկէ աւելի անգամներ անիկա առիթ ունեցած է պաշտօնապէս դիւանագիտութեան հետ յարաբերութեան մտնելու, թէ՛ 95 ին և թէ՛ 96 ին. միշտ անոր պաշտպանած գատարանական խորհրդարաններու մէջ երկար վիճարանութեանց նիւթ տուած է: Հետեւաբար Սուլթանական ներկայ խաղերը չեն կրնար, ինչ որ ալ ըլլայ, հայ յեղափոխութիւնը իբր անիշխանականութիւն ճանչցնելու: Սուլթանը ինք պիտի լսէ ու ինք պիտի հաւատայ: Ու որքան ատեն որ իր կառավարած երկրին մէջ անպատիժ սպանութիւններ, թողաբար թալաններ, առեւանգումներ, անիրաւութիւններ ցեղի մը հանդէպ, գոյութիւն ունենալէ չեն զաղրիլ, եթէ հայերը տասնեակ Համիտներ ալ իրենց գահին վրայ սպաննելու ըլլան, Պոլսոյ ոչ մէկ եղբունդատ ատեն պիտի կրնայ հայ յեղափոխութիւնը անիշխանական ճանչցնել տալ Եւրոպայի առջեւ:

Սուլթանը թող գիտնայ ասիկա ու ինք ալ ինչոյ իր բրածին վրայ:

ՇԱՂՄ

ՍՈՒԹԱՆԻ ՄԱՅԱՓՈՐՁԸ

ԱՄԲԱՍՏԱՆԱՆԵՐՈՒՆ ԴԱՍԱ ՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱՄԲԱՍՏԱՆԻՉ ԱՏԵԱՆԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԻՆ ՊԱՏՃԷՆԸ

«ՄԱՆՁՈՒՄ»-Ի ԷՃՔԵԱՐՈՒՆ ԶԵՊՈՒԾ

Նախագահի փոխարող Մէլմէտ Թէվֆիք պէյէ, անդամ Թագուր և օգնական տնօրէն Հրեւիկէն Հիւսնիքֆ, ներքէն կազմուած ամբաստանիչ մարմինը ն/ստ գումարեց ի ներկայութեան Վերաքննիչ Ատենին ընդհ. դատախազութեան բարձր պաշտօնին օգնականներէն Մազար պէյի և պիւճիական ակումբեան թարգմաններէն Մ. Մարքէթիչի և քարտուղարներէն Մարգ պէյ կարգաց ընդհ. դատախազութեան 321 Հոկտեմբեր 15 թուակիր պաշտօնագիրը Պոլսոյ նախադատ Ատենին հարցաքննչութեան որոշմագիրը և ուրիշ պաշտօնաթուղթեր:

Այս որոշմագրին իմաստը սա էր թէ 1321 տարուայ Յուլիսի 28 րդ. Ուրբաթ օրը Սելամյըքի արարողութիւններէն ետք, երբ Վեհ. Սուլթանին մզկիթին վերադարձին առթիւ Կ. յս. զորքերը իրենց բարեկարգական գիրքը կառնէին, Մարգարանի հրապարակի վրայ եղեռնական բռնկում մը տեղի ունեցաւ, որուն սոսկալի է տեւանքով 26 հոգի սպաննուեցան և 58 հոգի վիրաւորուեցան. այս առթիւ ամբաստանուած ձերբակալներուն և փախստականներուն մասին կատարուած հարցաքննութիւններէն հաստատուեցաւ թէ Տէ՛ր մի արասցէ, (°) Կայսերական մայրաքաղաքին և օսմ. կայս. երկրին կարգ մը կարեւոր տեղերուն մէջ ընդհանուր մեծ յեղափոխութիւն մը առաջ բերելու անիշխան մտադրութեամբ, Պուլխարիա ձեռնոյն և թիֆ-

(°) ներկայ յօդուածը Պոլսոյ թերթերէն արտատպելով մեր ընթերցողներուն կը թողունք իրենց յարմար իմաստը տալ նոյնանման աչաթուրք բացատրութիւններուն զորս թիւրք գրաքննչութիւնը կը բռնադատէ անհրաժեշտաբար գործածել Պոլսոյ թերթերուն մէջ:

Ծ. Ո.

յիս գտնուած Հայ և Պուլկար խոս-
վարարական ընկերութիւններուն ո-
րոշմանց և կազմակերպութիւններուն
արդիւնքն է յիշեալ եպիսկոպոսի ոճիրը :
Մտադրուած և որոշուած յեղափո-
խութեան ձեռք եւ կերպը այնպէս էր
որ, կայս. զօրքերը որոնց սիրաբը
զեղուին է կատարեալ հաւատարմու-
թեամբ ու անձնութեամբ հան-
դէպ վեհ. կայսեր. ինչպէս նաեւ հա-
ւատարմ կայս. հպատակները, ո-
րոնք հոն կը գտնուէին, նոյն պա-
հուն, բնական է թէ իրենց զգացած
արագ շփոթութեան ու սպաւորու-
թեանը ազդեցութեամբ, եպիսկոպոսի
յարձակումը օտարահպատակներուն
պիտի վերադրէին. և անոնց զէմ
շարժումը և ընդհանուր յարձակումը
մը պիտի կատարէին. և այսպէս այդ
ոճրարարները կը յուսային իրենց
վատագրի արարքները արդիւնաւորել :
Նոյն իսկ անցեալ տարի Հայ դաշնա-
կից յեղափոխական մարմինը և Պուլ-
կար խոսվարար ընկերութիւնը
խառն, Սօֆիայի մէջ արտակարգ ընդհ-
ժողովը սը պուժարեցին : Այս նիստին
ներկայ էր նաև իր անխնայական և
յեղափոխական գաղափարներով ծա-
նօթ իր կողմէն անուր փրանսացի
խմբագիրը, որ Հայ յեղափոխական-
ներուն իր օրկան իր հրատարակած
«Իրո Արմէնիա» թերթին մէջ համա-
նօսական խօսելով այս կարեւոր գու-
սարուձեռութեան և գաղտնի որոշում-
ներուն սարսի գրած էր թէ Հայ
յեղափոխականները իրաւամբ ստիպ-
ուած պիտի ըլլան ցարդ իրենց խու-
սափած սանձնէն զճառական և վիճի-
նական գործադրութեան գիմելու :
Այս խոսվարարական որոշմանց հա-
մաձայն, «սոյսոյ մէջ գործադրութեան
անխմբագրի սիւնըները կազմակեր-
պելու համար գործի ձեռնարկած է
նախ. Պաքուի Հայրենի և Թուսիա-
յէն վտարեալ յեղափոխականներէն
Սրբախօսքի Սրբախօսքի որ «Իրո
շակո Հայ յեղափոխական ընկերու-
թեան կեդրոնը ձեռնով փոխադրած
և հոն հիմնած էր «Իրօշակո յեղա-
փոխական իւր թերթը. Սրբախօսքի ան-
ցած հոգեւորները Պուլկար գալով Պի-
ճիպի ձեռքաւարեալ փորձի բնա-
կած իրարայր սրբախօսքի մէջ իր
աղջիկը ցոյց առած Թուսիան Ֆայնի
հետ Մտաուէլ Ֆայն ծածկանունով ա-
միտի մը շափ բնակեցաւ : Սնանկ
զարձակ հայ յեղափոխականներէն և
սակայն ել կրօնականներէն, Արնա-
վուսէլօյի վաճառական Գէնտէրեան
և Լիբարիս կամ ուրիշ անունով
Սաֆօ. իշխաններուն վարչութեան
տակ, Պուլկար մէջ յեղափոխական մաս-
նաճիւղը մը հաստատած էին իրենց
անխմբալ շախտակներուն գործադ-
րութեան համար. կարեւոր գործադ-
րութեանց յանձնառու ըլլալով, աս-
տիճանական կերպով ծառայող և օ-
ժանդակող այդ մասնաճիւղը կազ-
մողները վերը իրենց անունը յիշա-
տակուածներն են : Այդ յեղափոխա-
կաններուն խոսվարար ստաղբու-
թեանց իր արդիւնք, իրենցմէ Սրբա-
խօսքի Սրբախօսքի, աղջիկը՝ Թու-
սիան Ֆայն Լիբարիս և Տիկ. Սօֆի
Իրա, շ անգամ Սեւաթի ի հանդի-
սավարին բարձրաւանդին վրայ և
տասերկու անգամ ալ բարձր արա-
րողութիւնը դիտելու համար սովո-
րաբար եկող միւս հիւրերուն մէջ,
Մարգարանի հիպարակը գտնուած
են. քանիցս ուշադրութիւն ըրած,
հաշուած և արձանագրած էին որ
մզկիթին ներքին գուռնէն մինչեւ
բակին գուռը մէկ վայրկեան 42 երկ-

վայրկեանէն կը հասնի կայսերական
կառքը. հետեւաբար սգոխային մե-
քենայ անուր սոսկալի և սպանիչ
նիւթեր պարունակող գործիքը հայ-
թայթելով, կառքի մէջ գրած, նոյն
բարձր վայրը մատուցած և վեհ.
կայսեր վերագործին պահուն գոր-
ծածել որոշած էին. միայն Սրբախօ-
սքի Սրբախօսքի եպիսկոպոսի ձեռնար-
կին այս ձեւ գործադրութեան հա-
կառակ ըլլալով, բարձրաւանդին վը-
րայէն ձեռքով պայթուցիկ նետելու
գաղափարին վրայ կը պնդէր և այդ
կերպ պայթուցիկ նետելու փորձերը
շարունակելու համար Սօֆիա գաղտն-
էր. Այս միջոցին ձեռնովայի մէջ Հայ
յեղափոխական գաղափարական մարմ-
նին մէկ համաժողովը պիտի գումար-
ուէր. Պուլկար յեղափոխական մասնա-
ճիւղին կողմէ իբր պատուիրակ նոյն
համաժողովին ներկայ գտնուելու
համար յիշեալ փորձի անցադրովը
Պուլկար փախած է արնավում քէօյի
վաճառական Գէնտէրեան, որ Սօֆիա
հանդիպելով Սրբախօսքի հյուսէ-
րով նաշուկ կամ Պարի Էֆէնիսի զիւ-
ղը գացած են. հոն երկուքն ալ պոյ-
թուցիկ փորձ կատարած ատենին,
անակընկալ պայթման մը հետեւան.
քով սպաննուած և բնաջինջ եղած
են. հետեւաբար, ըստ իսկ կատարով
լեղանական վատ արարքը գործադ-
րել մտադրող Սրբա, իր կողմէ Սօֆի
անուան մասնաճիւղաբար վէճնայէն
Պուլկար կողմ սը բերել տուած է, այս
կառքը Սրբախօսքի կամ բուն ա-
նունով վաճառի, սիւնող Սաթիոյի
և Սրբախօսքի միջոցաւ մաքսատուէն
հանուած է, կառապան Մկրտիչի
կողմէ Շիշի, Թաթաւալ ձեռնախօսքի,
նախապէս վաճառու և յարգարուած
սխտը և կատարուելու փոխադրուած
է, որ բերուած են կարպետ Նշուսի
և վերոյիշեալ Մկրտիչի կողմէ գըն-
ուած կենդանիները. այդ կառքը ե-
ղանական արարքին սլը կառապան
Գրիգոր վարչաժողովի և ձեռագրման
երուանկը կողմէ վարչութեան մտցուած
է Սեւաթի Սրբախօսքի իսկ մէջ և
սոսկալի գործիքը ատոնց ինչպէս
նաև Լիբարիսի, Սր. Թուսիան
Ֆայնի կողմէ անձամբ գործածուած
և բնակցուած է. իսկ Սրբախօսքի
Կարպետ Նշուս և Արտաշ Թորոզի
կառապան Սրբախօսքի իսկ վերա-
բերեալ գտնական պարտատու-
թիւններ, մասնակից և գաղափա-
րակից եղած են ամէն տեսակ յեղա-
փոխական խորհրդակցութեանց, ըն-
կերակցած են պայթուցիկ գործիքին
պատրաստութեան, մէլին ի թ
կոչուած կարեւոր հրանիւթը, քու-
պարա, պայթուցիկ, պատրոյց և
այլ քանդիչ և հրավառ գործիքներ
բերել տուած են Պուլկար. եպիսկոպոսի մը-
տադրութեանց գործադրութեան հա-
մար, զանոնք պահած և ընկերու-
թեան մէջ մանող ծանօթ անձերու
բաժնուած են : Ձեռքաւարեալ էտուար
փորին և կիւր Սնան Էֆէնիս ալ
ատոնք իրենց տունը ընդունած, ա-
մէն տեսակ վատ և շար խորհրդակ-
ցութեանց, թղթակցութեանց, ձեռ-
նարկութեանց մասնակից եղած են.
Փորին անձամբ կատարած է մէլին
ն ի թ-ի պատրաստութիւնը, և որո-
շած է պայթման համար պէտք ե-
ղած ձեռնութիւնը ու պայթման պա-
հուն օտակալի ազդեցութիւնը մը ա-
ռաջ թերեւտ համար, երկաթեայ սըն-
տուկ պատրաստած և մէջը զետեղած
է հրավառ նիւթը. նաև փորին եր-
կար ատեն իր քովը պահած է 144
թիւրջի շափ մէլին ի թ-ի ծրար-

ները և զէպքին գիշերն ու առաւուն
ալ, Լիբարիսի և Օր. Թուսիան
Ֆայնի հետ խորհրդակցելով զա-
նոնք խրատուած և սրտապնդած է
և Թուսիանի հետ ալ յաւիտենա-
կան հրածեղը փոխանակած է : Քա-
ռապան քիւ ծանրութեամբ և երկու-
քարիւղի թիթեղ տուի արտողու-
թեամբ մէլին ի թ-ի երկաթ սըն-
տուկն ալ անձամբ եղանակով մը
չինուած է երկաթագործ Մէլիոյի
և Մանոյի կողմէ և զէպքին օրէն
առաջ յանձնուած է : Փախտական
Տիկին Շքովա խոսվարար ընկերու-
թեան անդամ ելած է և յեղափո-
խական թղթակցութիւններու միջ
նորդած է :

(Շարունակելի)

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

Թուս - ձեռնական պատերազմէն
յետոյ այսօրուայ ամենահետաքրքիր
քաղաքական հարցերէն մին պէտք է
նկատել և Մակեդոնականը :
Գնալով նա կը զգենու պատմական
և սպառնական վիճակ :
Միւրշտէկի ամուլ համաձայնութեան
յետոյ, անգլոսլաւոս Երան ձեռք
խբեց Անգլիան՝ և այսօր իր բերած
Ֆրանսական հարցով, զորս քարչեց
իւր հետ սխալին և եւրոպական միւս
տէրութիւններ ու ցոյցեց Սուլթանի
առաջ նաւային ցոյցով :

Անգլիական այս ցոյցը աւելի ե-
րեւոյթն ունի ուղղուած ըլլալ Գեր-
մանիոյ դէմ, որ ԳՅ թուականէն
ի վեր, զբիթէ կառավարչէն է եղած
Երեւոյթն, ներմուծելով հոն իւր վա-
ճառականութիւնը ամենէն շատ ի-
վեսս Անգլիոյ վաճառականութեան :
Այս ցոյցը բնօրին ունի միանգա-
մայն հատուցումն ըլլալ Մարտի
ազմակից խնդրի :
Թէ ի՞նչ կարելի է սպասել ներկայ
նաւային ցոյցէն, մտորկ սպագան
կը պարզէ այդ :

Ձը կարծուր թէ այս անգամ եւ-
րոպան գոհանայ խոտուձեռնով մի-
այն, ինչպէս որ եղաւ ԳՅ թուակա-
նին՝ Հայաստանի համար պատրաստ-
ուած Մարտեան ծրագրով, օրովհե-
սաւ ասով առիթ պիտի տայ
Պաքուեան թերակղզիին մէջ,
կարծուածէն շատ աւելի շուտով և
բուռն հրդեհի մը արձայնութեան, որ
կրնայ ամողջ Եւրոպան հրդեհել :
Աւստրիոյ ներկայ տագնապակից
ներքին վիճակը չը թուր տար իրեն
յարտուած գործել՝ այլ շրջանայեցո-
ղութիւնով, ու այս իսկ պատճառով
չը կարծուր որ նա անսայ գերմա-
նական քաղաքականութեան շուրջնե-
րուն, ի վեսս իւր շահերին :

Տաճկական կառավարութիւնը ինչ
ինչ դարձուածքներով ի՞նչ և տշխա-
տեց վիճակներ ֆրանսական հարցը,
ու շարդի սպառնալիքներով նաւա-
յին ցոյցը, բայց իրեն չը յաջողուց,
և իւր այս պարտութիւնը ու զեց լը
աւելան հասկննել ու լարդել պուլ-
կարական կառավարութեան ի վրայ :
Եթէ իրաւիցէ այս նաւային ցոյցի
սկզբնապատճառը չեղած է պուլկարա-
կան կառավարութեան վարած քա-
ղաքականութիւնը, պէտք է ծափել
զայն :

Սակայն Սոյի անակոն կառավա-
րութիւնը, փոխանակ պուլկարական
կառավարութիւնը ճանչնալու ստեղ
ծիչը ու արձարծիչը Մակեդոնական

շարժումներն, ինքն իւր ստեղծած
բէթի մէջ թող որոնէ անոր իսկական
պատճառը : Սուլթանական կառավա-
րութեան այս յարուցած կասկածի
հետեւանքն է կերելի, որ աւստրիա-
կան կառավարութիւնը փութած է
ազդարարել Պուլկարիոյ, որ երբէք չը
յանդգնի ներկայ նաւային ցոյցէն
սիրտ աննելով մի ու է խլրտու
յառաջ բերել, աւստրիականին հետե-
ւած են և միւս կառավարութիւն-
ները :

Սակայն այս ազդարարութիւնը, ա-
նիրաւարար ուղղուած է մասամբ
պուլկարական կառավարութեան, որ
երկու տարիներէ ի վեր վարած է,
համբրաւար քաղաքականութիւն
մը՝ կշտին ունենալով իւր ցեղակից-
ներու ցաւը :

Այս ազդարարութեան պիտի պա-
տասխանէ՞ կառավարութիւնը, հա-
ւանական է իշխանին այսասահմա-
նէն վերագործէն յետոյ :

Իսկ եթէ ներկայ նաւային ցոյցը
կը ծնի մի մուկ, այն ժամանակ
պայթելու է Մակեդոնական յեղա-
փոխութիւնը զօրացած ներքին և
արտաքին ուժերով, ու պուլկարա-
կան կառավարութիւնը կը լրացնէ
իւր գործունէութեան շրջանը զինու-
շտապիւնով, ինչպէս որ չը վարա-
նեցաւ յայտարարել երեսփոխանու-
թեան առջեւ նախարարպետ Բեդ-
քով :

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ն

Մովային ցոյցը Թուրքիոյ Հան-
դէպ, կը գրէ գերմանական օրկան
«Տայգէ Թակէս»-Մայիսեկի միայն
պատճառ մըն է, քորֆիթգ մը յառաջ
բերելու համար, որու հետեւանօք
Աւստրիան պիտի մտնէ Մակեդոնիա,
և Թաթաւալ պիտի գրաւէ Ալպանիան,
այսպէս երեակ ներգաղափարութիւնը
պիտի կորսնցնէ իւր գործնական ոյ-
ժը. Իտալիա և Աւստրիա, Անգլիոյ
ձեռքը գէնք պիտի ըլլան, գոր յա-
ռաջ բերելու փափաքած գոնֆիթքը
գաղտնապէս կը զրդէ Սուլթանը գի-
մադրել — վերոյիշեալ միջազգային
գրութիւնը ստեղծուելուն պէս, Մա-
րտի համար ըլլալիք խորհրդակցու-
թիւնը, Ֆրանսայի համար առիթ մը
պիտի ըլլայ որ խզէ Գերմանիոյ հետ
իր յարաբերութիւնը, այն ատեն
Գերմանիոյ դէմ եղաւ միախմբուած
պիտի ըլլայ վերջապէս գործ մը :
Իտալիական շրջան Անգլիոյ հպա-
տակ է, Սպանիան կախում ունի
Իտալիայէն, Պելճիգա և Հոյանտա
պիտի ստիպուին հետեւել Անգլիոյ,
որովհետեւ կը վարնան, չըլլայ թէ
ծովէն յարձակի իրենց վրայ, ու
գրաւէ իրենց գաղթականութիւնները
Իտալիական, որուն մէջ այլեւս կը
թագաւորէ Էտուարտ Է. փեան,
պիտի գնայ Անգլիոյ հետ, որուն հետ
պիտի գաղտնակցի և Տանիմարան :

Այսպէս Գերմանիան շրջապատ-
ուած թշնամիներէ, պիտի գտնուի
տաւանց գաղտնակիցի, և այն ժամա-
նակ Գաղղիան պիտի օգտուի առի-
թէն....

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ստացած ենք Տօք. Փաշայեանի մէկ գրքովը որ կը խօսի Աղէք սանդրիոյ տեղական ազգային խնդիրներու և սահմանադրական պայքարին վրայ:

Յիշիպէն Մկրտիչ Թաշեան և Կառնիկ Պարոնեան ստորագրութիւններով յօդուած մը ստացած ենք. — Յօդուածագիրները Աղքատախնամի կարեւորութիւնը շեշտելով, ուշագրութիւն կուզեն հրաւիրել Աղքատախնամի վարչութեան, և զանձանակը շրջապայեցնող մարդոց ընտրութեան վրայ, կըսեն թէ երբեմն այնպիսի կոշտ մարդոց կը յանձնուի այդ գանձանակը որ ներկայանալու և դրամ ուզելու կերպը բնաւ չեն գիտեր և սրբճարաններու մէջ, օտարականներու առջեւ մարդը ամօթապարտ կը ձգեն:

Յօդուածագիրները կաւելցնեն նաև թէ այդ պարագայն ոչ միայն անպատուութիւն է միշտիկ հայ համայնքին այլ նոյն իսկ Աղքատախնամի հասոյթին ալ կը վնասէ քանի որ շատեր խոյս կուտան ամչնալով զանձանակը շրջապայեցնողներու տձեւութիւններէն:

— Բօրթումութի այն պանդուկին մէջ որ Ռուս և ճարտարական հաշտութեան լիազօր պատգամաւորները, կոմս Վիթթէ և պառոն Գօմուրայ և իրենց հետեւորդները իջեւանեցան և զլուխ հանեցին այն հաշտութիւնը, որ պատճառ եղաւ երկու թշնամի ազգերուն միջև թափող այլև:

Գ Ր Ե Յ

ՕԳՏԱՎ ՍԻՒՊՕ

ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ

(Թարգմանուած Ֆրանսերենէ)

Նախ եւ առաջ ծախեց ինչ որ կըրնար ծախուի: սկսեալ փլատակներէն որ կը խափանէին բակերը, մինչեւ պզտիկ մատուռին վարդեղէնները զորս միտարները իրենց վերագար ձին, ախափոյ հաւաքած էին նախկին սեղանատան մէջ:

Ինչ պէտք էր մատուռի մը միս մինակ իրեն համար, ինք կրնար երթալ պատարագ մատուցանել մօտակայ թմբին մէջ:

Մտիեց կան կարասին, պահելով միայն փայտ: մահճակալ մը քնանալու համար, սեղան մը, աթոռ մը, քանի մը բարեպաշտական գրքեր, խաչելութիւն մը և Ս. Ժան տը Մաթայի մէկ գունաւոր կենդանադիրը իր ծախելու մտնելու թեան մէջ ծախեց կուռնադուռներուն հին ծխիչները զորս ինք իր ձեռքով քակեց, հին երկաթեղէնները, շրմինէին հին թիթիղները, պարսիկական ականջոր:

նահեղութեան զագարումին. երիտասարդ հայ մըն ալ պ. Գէորգ Գանիէլեան իրբեւ ծառայ կը սպասուորէ եղեր այդ մեծ հիւրերուն, որոնք զոհ մնալով պ. Գէորգէն 1000 ոսկի նո. իրած են իրեն: Պ. Գէորգ Գանիէլեան իր այդ գրամովը ձեռնարկած է վաճառականութեան և հա՛ հաշտութեան բանակցութեան նախընթաց անթիւ օգուտներէն հատմը, որ ծառայի աստիճանէն վաճառականութեան կը բարձրացնէ երիտասարդ մը:

— Պօսթօն հրատարակուող Արմէնիա անգլիերէն ամսաթերթը հոկտեմբերի ամսաթիւին մէջ հրատարակած է Սամսոնի հայոց խնդրագրոյն պատճէնը ուղղուած Պօլսոյ անգլիական գեսպանին օգոստոս 10 թուակիր:

Այդ խնդրագրով Սամսոնիք իրենց դառն վիճակը կը յայտնեն նկարագրելով վերջերս իրենց քաղքին մէջ պատահած հրդեհները որոնք թիւրք հրդեհներու գործերը են: Կառավարութիւնը հայերու վրայ կը ծանրացնէ հրդեհներու պատճառը և ուզածնին պէս կը շարժէ խեղճ անձեղ հայերը:

Խնդրագրի մէջ աւելցուած է նաև՝ բնաւ կեանքի ապահովութիւն չկայ և թէ ամէն վայրկեան իրենց տուները թիւրք խուժանին կողմէն կրակի տրքուելու վախ կայ: Գրեթէ յաճախ, թիւրք տղայոց ձեռամբ բռցավառ նիւթեր կը տրուին հայերու տուները բռնկցնելու համար: Թիւրք խուժանը, մանաւանդ լալ նաւավարները երգուընցած են ուղիակաճու խկրա

ծիքները, տանիքներու ճաթած խողովակները, ամէն բան ծախեց;

Ահէն անգամ որ երկաթի կամ պղնձի կտոր մը գտնէր, կը հրճուէր և զագակելով:

— Պիտի շինեմ մատուռը:

Եւ ինչպէս որ ամէն բան ծախած էր, անտէր ալ կործանեց ամէն բան: Տապալեց ծառուղիին ծառերը. հսկայ կաղնիներ, ոյռք իրենց պատկանելի շուքին տակ պատսպարած էին կրօնաւորներու քսան սերունդներ, իր անյարար իկնելը կործանեց շաքանակներէնու եւ եղբիւրներու պզտիկ անտար որ վաճաքին առջեւ կանաչութեան պատնէջի մը պէս էր, և ուր ճամբաները, կոճղերը, իւրաքանչիւր մամուռ հաւատարիմ յիշատակ մը կը պահպանէին, կործանեց սարիւրնան որուն խորը գողգողայ մը կար, որուն մաշած աստիճանները ցոյց կուտային ծունցերու գրոշմը անոնց, որոնք եկած էին աղօթելու կտրեց պարտէզին պողպատե ծառերը, կործանեց նոճիները, պահպանեց գերեզմանոցին շրջմանը: Եւ գըրուելու բաց, փայտահատներուն մէջ տեղ, իր ճերմակ պարեգօտը հանգրիճած մինչեւ մէջքը, զանոնք ալ խառութեան կը գրգռէր եւ բոլոր ոյժով ծանր տապար կը մխրճէր հին ծառերու կարմիր սիրտը, վայրենի

կիտալ հայոց թաղերը՝ կողոպտել և բնաջինջ ընել հայ ժողովուրդը:

Քաղաքին կառավարիչը որ արդէն Եօզկատի մէջ հայոց նրկատմաբ ունեցած ատելութեամբը հանրածառութիւնը, բոլորովին անտարբեր է ու ժողովուրդին կեանքը, պատիւը և ինչքը անպաշտպան՝ բաղդին նուած են:

Հայոց Աւաջնորդն ալ տղէտ մարդ մըն է անկարող իր պարտականութիւնները կատարելու և պահպանելու իր հօտը: Նա մինչեւ իսկ չէ կրցած կառավարչին և հիւպատոսներու ուշադրութիւնը հրաւիրել աղետալի դէպքերու առաջին առնել տալու համար:

Հիւպատոսներն ալ բոլորովին անտարբեր դիրք մը առած են իրենց բոլորտիքը կատարուած դէպքերուն և որոնք պարտաւոր են իբր ներկայացուցիչ պաշտպանել ամբողջ քրիստոնեայ հասարակութիւնը, իրենց բոլոր ուշադրութիւնը միմիայն իրենց անձնական շահերն ապահովելու մէջ կը կայանայ:

Խնդրագրուը, յանուն մարդասիրութեան և քրիստոնէութեան կը խնդրեն քրիստոնեայ գեսպանէն, որ հաճի միջամտել Պօլսոյ թիւրք կառավարութեան մօտ որպէսզի անմիջական հրահանգներ չընէ Սամսոնի իշխանութեանց հայոց նկատմամբ ծաղած թշնամութիւններուն վերջ մը տալու համար:

Արմէնիայի խմբագրութիւնը վերագրեալ խնդրագրին պատճէնին տակ հրատարակած է նաև

ձայնով մը խանչելով

— Պիտի շինեմ մատուռը:

Փոքրիկ աշտարակիկի մը բարձրէն որ կը հովանաւորէր վանքը, ուղեց ըմբռնելու այս աւերումին տեսարանը զիտիւրու անտահման եւ կսկծալի ուրախութիւնը:

Շուրջանակի, ծառերը կը փոռէին իրանիւրու, ահոելիօքէն յօշոտուած, ոմանք պառկած, գալարուած և կտրուած լայն վերքերով արիւնահոս, կոճղերնին օդին մէջ, խորթալով, կրթնած իրենց կոտորած ճիւղերուն վրայ, ինչպէս ճգակտոր մարմնոյ մը վրայ, Հատ մը միայն կանգուն մնացած էր պարտէզին զրան մէջ, ազգոյն խեղճ կեռասնի մը ապշած այդքան մինակ ըլլալուն այդ հողին վրայ, այրիացած իր յանդուգն զակներէն և բոլորովին քերտուած, Թոշուները վոնտուած իրենց ապաստանարաններէն կը թռչէին օդին մէջ զարհուրած, կոճեր արձակելով:

Մնաց որ, Հայր Բաճիլ ալ չէր նայեր այս ճակատալային ուր կը մեռնէին ինկած հոկանները:

Ան կը տեսնէր իր եկեղեցիին քիչ քիչ դուրս ելլալը բոլոր այս աւերակներէն, բոլոր այս մեռնելներէն, առնելով ձեւ մը, բարձրանալով, բարձրանալով միշտ, գործաւորներու

այնպիսի վկայութիւններ Սամսոնի հիւպատոսներու մասին, որոնց ընթացքը նախատինք մը կը համարէ քաղաքակիրթ Եւրոպայի և Ամերիկայի համար:

Սամսոնի մէջ բացի աղբիւրական հիւպատոսէ, կը գտնուին ուսական, ֆրանսական, գեղմանական, իտալական, աւստրիական և պելճիգական հիւպատոսներ, որոնցմէ ոմանք իրենց անձնական զործերով պարագող մարդիկն են և ոմանք ալ թիւրք պաշտօնեաներու հեամտերիւ՝ յարաբերութիւն ունեցողներ քրիստոնեայ հտտարակութիւնը շարշարելու համար: Այլ ինչ կարելի է սպասել, կը վերջացնէ նամակագիրը, այսպիսի մարդիկներէ ներկայացուցիչ ունեցող քաղաքակրթեալ և քրիստոնեայ պէտուութիւններէն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսոյ գեսպանական և Եւրոպացիներու շրջանակին մէջ մեծ մտատանջութիւն պատճառած է Ժօրիսի հետեւեալ յայտարարութիւնը:

Նախագահը հորցուց Ժօրիսի:

— Ուրկէց մտածեցիք Սուլթանի վրայ մահափորձ ընել:

— 96 ի ջարդերուն մանրամասնութիւնները կարդալով համոզուեցայ որ Սուլթանը արժանի էր մահուան:

— Բայց չի մտածեցի՞ք թէ երբ Սուլթանը մեռնէր ալ աւելի սոսկալի ջարդեր տեղի պիտի ունենային:

բանակի մը ուսելուն վրայ երբուն, կը տեսնէր ինքզինքը որ կառչելով նորակերտ մայր եկեղեցւոյն կողմը, յազելով քարէ քար կը տընկէր զանգակատան գագաթը վերաշահուած ոսկի խաչը յաղթական:

Այս ծառուր երկու մասի բաժնեց, մէկը ծախեց, միւսը վար դրաւ, յառաջիկայ շինութեանց համար՝ եւ, երբոր բան մը մնաց ծախելու եւ ոչ ալ կործանելու, թեմական ճարտարագետին մօտ գնաց:

Հանդիսաւորապէս մատուռին տակագլձը պարգեց, մէկիկ մէկիկ բացատուց գրքին պատկերները, երկարօրէն խօսեցաւ, անհասկնալի պատմութիւններ, մէջ մտորեցաւ:

— Ահա՛ թէ ինչ կուզեմ վերաշինել ըսաւ ամենքն ալ... ամէնքն ալ... կը հասկնա՞ք. եւ քանի՞ կը կարծէք որ նստի աս ամէնը:

— Վե՛մ գիտե՛ր պատասխանեց ճարտարագետը ապշած... ինտոր կրնամ գիտնալ:

— Մօտաւորապէս... սակ մօտ բան մը:

— Չեմ գիտեր, ե՛ս... երբ... չորս... հինգ միլիոն... գոյժը գիտէ:

— Հինգ միլիոն, ըսաւ արեգան ոտքի ելլելով... աղէ՛կ, պիտի գրտնեմ:

Եւ Հայր Բաճիլ հանգանակութեան ելաւ:

(Շարունակելի)

— Այո՛, մտածեցի, բայց մը-
տածեցի միանգամայն թէ այս
անգամ վերջինը պիտի ըլ-
լար :

— Նախարարական խորհուր
գը երէկ որոշեց ընդունիլ ֆի-
նանսի քօնթրօլը Մակեդոնիոյ
համար. գիտութեամբ նախարար
Րիզա բաշան մերժած է ստորագ-
րել ընդունելու մազպաթան,
հաւանական կը կարծուի հարցին
բարուք վճարելը — Բարիգիւս-
պան Միւնիթր բաշան պիտի կար-
գուի արտաքին գործոց նախա-
րար, այս նախարարութեան ներ-
կայ վարիչը ինքիք բաշան Հը-
սոմի գեսպան պիտի անուանուի
Եպարքոս Ֆէրիտ բաշան, պիտի
փոխանակէ նախկին Եպարքոս
Սայիտ բաշան :

— Պէրլին 21 նոյ. — Դէքօ տը
Բարի՛ւր լրագիրը կիմանայ թէ,
Բ. Գուռը պատրաստած է ծրա-
գիր մը, եթէ երբէք Եւրոպա-
կան միջազգային նաւատորմիչը
պաշտէ Տարտանէլը, տաճկական
զրահաւոր շոգենաւները պիտի
պաշտեն Տարտանէլի մէջ եւրո-
պական վաճառականական նաւերը
և չպիտի թոյլատրուի անոնց
անցնիլ Պոսֆօրի եզրերով :

Եթէ այսինչ «Տէլի» իրաւին կը
հեռագրեն, միջազգային նաւա-
տորմիչը Լէմնոս և Իմնոս կղզի-
ները գրաւել յետոյ պիտի բաժ-
նուի թիւրքերի, մէկ մասը պիտի
երթայ Զմիւռնիա իսկ միւսը Սէ-
լանիք :

— Պայրամի առաջին օրը որ
ատեն տեղի կունենայ աշահամ
բոյրի արարողութիւնը, առանց
ո և է միջազգային անցաւ : Արա-
բողութեան ներկայէին միայն
պարսկական և ամերիկեան գես-
պանները, իսկ միւս գեսպանները
իրենց առաջին թարգման-
ները զրկեցին շնորհաւորու-
թեան համար : Պահակ շոգենա-
ները զրոյշապարզուած էին :

Կացու թիւնը անփոփոխ կը մը-
նայ. Թիւրքիա դու ընդունած
չէ տէրութեանց պայմանները :

— Միտիլիի կառավարիչը բո-
ղոքեց տէրութեանց ձեռնարկին
դէմ : Պատերազմի կողմնակից-
ները ճնշում կը բանեցնեն
Սուլթանին վրայ որ գեսպաննե-
րու հետ իր յարաբերութիւն-
ները բարորդի խզէ, քանի որ
տէրութիւնները թրքական հող
գրաւած են պատերազմի յայ-
տարարութեան պատճառ տուած
եղան ինքնին :

— Պօլսէն հետեւեալը կը հե-
ռագրեն «կապէթ» ար Ֆրանք
ֆորթի :

Իժուարին է որոշ բան մը ը-
սել այժմու կացութեան վրայ,
Թիւրքերը բոլորովին ուրախու-
թեամբ մէջ են Պայրամի տօնին առ-
թիւ և անտարբեր իրենց շուրջը
անցած դարձածին :

Սուլթանին երկրորդ քարտու-
ղար Իզէթ բաշա գեսպանատուն-
ներ երթալով առաջարկեց շուրս
եւեմտական պաշտօնեաներու
տեղ քաղաքային պաշտօնեաներ
անուանել խնդրին լուծում մը
տալու համար : Զի կարծուի թէ
այս առաջարկը ընդունուի :

— Աւստրիա և Ռուսիա ծանու-
ցագիր մը զրկած են Սօֆիայի,
Պէլկրատի և Աթէնքի արտաքին
գործոց նախարարներուն : Ու
այդ երկու տէրութիւնները կը
յայտեն թէ իրենց ջանքերը Մա-
կեդոնիոյ մէջ բարենորոգումներ
ընելու համար պէտք եղած ար-
գիւնք չեն տուած և այդ բարե-
նորոգումներու անգործագրելի
մնալուն միակ պատճառը Թուր-
քիոյ չի պատկանիր որ չէ կրցած
իր խոստումները պահել, այլ մա-
սամը մըն ալ վերագրելի է Մա-
կեդոնիոյ մէջ բնակող պանդան
ազգութիւններու հակառակու-
թեանը : Ուրկէ առաջ եկած է խա-
ղաղ ժողովրդին կեանքին և ըս-
տացուածքին դէմ յարձակում-
ներ :

Տէրութիւնները որոշած են
ժողովուրդին վիճակը բարելա-
ւելու ամէն միջոցներ ձեռք առ-
նել, բայց անոնք թոյլ պիտի չի
տան որ պալքաններու նախկին
վիճակը, սթաթիքօն, փոփո-
խութիւն կրէ և եթէ հարկ ըլ-
լայ պիտի դիմագրեն ամեն կերպ
փոփոխութիւններու :

Պետութիւնները կը յուսան թէ
Պալքանեան տէրութիւնները պի-
տի օգտուին իրենց դրացի եղող
թիւրք նահանգներու վիճակի
բարելաւումէն, թէ իրենք ալ ի-
րենց ձեռքէն եկած ամէն ջոնք
ի գործ պիտի դնեն յեղափոխա-
կան շահումները արգիլելու հա-
մար, որոնք ազատագր եղած են
այդ տեղերը բնակող ժողովուր-
դին շահերուն :

Միւս տէրութիւններու ներկա-
յացուցիչներն ալ նոյնիմաստ
յայտնութիւններ բրին պալքա-
նի երեք պետութիւններուն :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Ա. Բ. Իշխանը Եւրոպայէն
վերագրածաւ Պուլկարիա, Նա
Պէլկրատի կայարանին մէջ տե-
սակցած է Սերպիոյ թագաւորին
հետ : Այս անսակցութեան ներ-
կայ էին Սերպիոյ նախարարա-
պետ Սայանակիչ և արտա-
քին գործոց նախարար Փուեա-
վիչ, պուլկարական գործակա-
տար Ռիչով և պաշտօնէութիւնը :

— Պուլկարիոյ ընդհ. վիճակա-
գրութեանց դիւանէն պատրաստ-
ուած վիճակագրութեան մը կը
տեսնուի որ 1893էն 1902, այս-
ինքն 10 տարուան միջոցին
16,599 ընտանիք, այսինքն
72,521 հոգի գաղթած են օտար

երկիրներ. որոնցմէ 70,603 հո-
գի գաղթած են Թիւրքիա,
68,687ը իսլամ. մեծամասնու-
թիւնը երկրագործներ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բարիչ 21 նոյ. «Թուրքալ» լը-
րագիրը բուսա գերմանական
սահմանէն կը ստանայ հեռագիր
մը, որով կը հասկցուի թէ մահ-
ուան փորձը ցարին դէմ եղած է
իշխան Վլատիմիրին կողմանէ,
չոր Կժտած է եղեր ցարին հետ,
անոր բռնած ընթացքին համար
իր որդւոյն մեծ իշխան Գիրլին
հանդէպ :

— Վրէննա 21 նոյմ.— Օտէ-
սայի «Իսմաիլ» անուն հետեւակ
չօրագունքը և մէկ ուրիշը ապս-
տամբած են :

— Պէրլին 21 նոյ.— Մուկուա-
յի սակարանին մէջ սարսափը
տիրեց, երբ լսեցին թէ Սեւ ծո-
վու նաւատորմիչը բոցերու մէջ
է :

— Բուսական Սեւ ծովեայ նա-
ւատորմիչին մէջ ծագած ապս-
տամբութեան պատճառաւ շատ
մը լծնդանութիւններ, հրազէնի պա-
շարներ, միւններ և թօրփիւններ
զրկուեցան Պոսֆօրի բերանը
գտնուող նոր աճրութիւններուն.
տալով հրաման ամբողջութեանց զօ-
րապետին, ընկղմել ամէն ուս-
տական ապստամբ նաւ թէ տաճ-
կական շուրերու մէջ երեւնայ :

— Երկրորդ անգամ ըլլալով
ամբողջ Ռուսիոյ մէջ յեղափո-
խութիւնը կը վերկուսի միահա-
մուռ : Երկաթուղիներու պաշտօ-
նէից հաւաքական գործադուլէն
յետոյ որոնք հաղորդակցու-
թիւնները ըրաթին բուն նշանա-
կութեամբը գաղթեցուցին, հի-
մայ հեռագրահարներն են որ
ամբողջ ուսական հեռագիրները
լուծութեան կը մատնեն : Մուկուան
կղզիացիք է Ռուսիոյ միւս մա-
սերէն, ինչպէս նաեւ ուրիշ կարգ
մը քաղաքներ, մէկ քանի տեղեր
զինուորականներ հեռագրահար-
ներ դրուած են, հաղորդակցու-
թիւնները չընդհատելու համար,
սակայն այս միջոցիս Ռուսիոյ
մէկ մասը միւս մասին մէջ ան-
ցած դարձած են տեղեկութիւն
չունի :

Միւս կողմէ, առ հասարակ բո-
լոր գործատուներու մէջ, բան
ւորները հաւաքական գործա-
դուլի կը դիմեն, աշխատութեան
ժամերու նուազում և վարձատ-
րութեանց յաւելում պահանջե-
լով կարգ մը գործարաններ ար-
դէն համաձայններ են ինը ժամ
ուան օրական աշխատութեան,
Այսուհանդերձ գործադուլները
միշտ կաւելնան : Մուկուայի բը
նակիչները վախերնուն քաղաքը
կը թողուն ու կը հեռանան :

— Սեւաստարոյի մէջ անցեալ

շարժու սոսկալի արիւնահեղու-
թիւններ տեղի ունեցան : Մօտ
5000 անձր կորուստ եղած է,
Սեղափոխականները ծովային
զինուորներու միացած քաղաքին
զանազան մասերուն վրայ յար-
ձակումի ելան : Ցամաքէն նշան
տրուեցաւ ապստամբ նաւատոր-
միչին որ անձնատուր ըլլայ, սա-
կայն ան մերժեց : Ասոր վրայ
քաղաքին հիւսիսային կողմը
գտնուող թնդանթաճիգներու
հրամայուեցաւ նաւատորմը ռըմ-
բակոծել : Բայց անոնք արդէն
առաջուց նաւազներուն հետ հա-
մաձայնած ըլլալով, փոխանակ
նաւատորմին վրայ ումբ արձա-
կելու, իրենց լծնդանութիւնները
զարձուցին կառավարութեան
չօրքերուն դէմ : Քաղաքը թէեւ
փնասուած չէ, բայց նաւատորմիչը
բուսական ծանր փնասներ կրած է :
Ապստամբ նաւատորմիչին պետը
անկախ ճմարի կռուի միջոցին
ծանրապէս վիրաւորուելով մեռաւ
և անոր վրայ ապստամբները
անձնատուր նշան :

— Ամերիկայի գեսպանին քար-
տուղարը Բեգերպուրի մէջ ձիով
պտտած ատեն 2 խոզարաններ յար-
ձակեցան վրան և արիւնլուայ վիճա-
կի մէջ թողուցին զայն : Հաւաք-
ուած ժողովուրդը քաղաքից ձե-
օղները պոռպոլ, «անկցի» աղնուա-
պետականութիւնը :

Ոստիկանութիւնը թէպէտեւ ու-
ղեց ձերբակալել յարձակողները,
բայց ժողովուրդը թող չի տուաւ :
Դեսպանատունը ազգու բողոքով մը
պահանջեց կառավարութեան յար-
ձակողներուն ձերբակալուիլը և
պատժուիլը :

ՍԵՐՊԻԱ

Պելկրատի մէջ տասը հազար
գործաւորներ գործադուլ են ը-
րած, քուէարկուելիք «ընկեր-
ակցութեան օրինաց» համար,
անոնք թափօր կազմած, կարմիր
գրօշակներով, անցան գլխաւոր
փողոցներու և արքունիքի առ-
ջեւէն, «Անցկի ընկերակցու-
թեանց օրէնքը, կեցցէ գործա-
ւորական միութիւնը, կեցցէ
բուսական յեղափոխութիւնը»
կանչելով :

ԱՆԳԼԻԱ

Լոնտրա 23 նոյ.— Պայֆուր թա-
գաւորին մատոյց նախարարու-
թեան հրամարականը, զոր ըն-
դունեց : Գամպել Պանէրման այ-
սօր պիտի ընդունուի թագաւո-
րէն :

Վ Ր Ի Պ Ա Կ

Գրաշարներու անուշադրու-
թեամբ, անցեալ թուի մեր նա-
մակատուփին մէջ «դեռ երէկ
«Հորիզոն» խմբագիրներ էին»
խօսքին վերջը չէ շարուած նաև
ձեռագրի մէջ գրուած սա տողը.
«կամ անոնց շատ մօտիկ մար-
դեր» :